



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ Վ Ա Յ Ո Ց Չ Ո Ր Ի Մ Ա Ր Չ Պ Ե Տ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք. Եղեգնաձոր

«20».....05..... 2015թ

N 49

2015 թվականի մայիսի 6-ին ԱՅԿԱՑՎԱԾ ՆԵՐՄԱՐՁԱՅԻՆ ԵՐԹՈՒԴԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՍՈՒԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍԿՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄՐՑՈՒԹՅԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թվականի մայիսի 6-ի «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին», թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001թ. օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին», N 762 որոշման 49 և 50-րդ կետերի պահանջները՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել մարզային մրցութային հանձնաժողովի կողմից 2015 թվականի մայիսի 6-ին անցկացրած մրցույթի արդյունքների վերաբերյալ արձանագրությունը

2. Մրցույթում հաղթող ճանաչել.

2.1 Եղեգնաձորի «ՎԱՍ» ՍՊԸ-ին հետևյալ երթուղիներում

- Եղեգնաձոր - Աղավնաձոր
- Եղեգնաձոր - Ելփին
- Եղեգնաձոր - Աղնջաձոր
- Եղեգնաձոր - Վարդահովիտ
- Եղեգնաձոր - Մալիշկա
- Եղեգնաձոր - Վերնաշեն

2.2 Անհատ ձեռնարկատեր Վրույր Խաչատրյանին հետևյալ երթուղում.

- Վայք - Եղեգնաձոր

3. Հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Խ. Ասլանյանին՝ մրցույթում հաղթող ճանաչված «ՎԱՍ» ՍՊԸ-ի և անհատ ձեռնարկատեր Վ. Խաչատրյանի հետ կնքել պայմանագրեր և ներկայացնել մարզպետի հաստատմանը:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Խ. Ասլանյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրության պահից:



Հ. ՍԱՐԳՍՅԱՆ